

# Հիւանդութեան մետաքսեայ շրջագգեստի եւ պատուոյ մասին

## հեղինակ՝ Երուանդ Կոպէլեան

Մսավաճառները, կիրակի օրերը կէսօրին կը գոցեն իրենց խանութները: Անոնք, որոնք շաբաթ իրիկուն չեն կրցած գնել իրենց պէտք եղած միսը, կիրակի առաւօտ մինչեւ կէսօր կը գնեն: Ամառը մանաւանդ, երբ օդերը տաք կ'ըլլան, դժուար կ'ըլլայ միսը մէկ երկու օր պահել տուներու մէջ: Այնպէս որ, երբ կիրակի առաւօտ կամ կէսօրուան մօտ գնեն, ցերեկուան եւ իրիկուան համար թարմ միս կ'ունենան: Այն պատմութիւնը, զոր պիտի պատմեմ հիմա ձեզի, դարձեալ այդպիսի օրով մը պատահեցաւ, գրեթէ ասկէ շաբաթ մը առաջ:

Երբ մսավաճառին խանութը մտայ, ժամը տասնըմէկուկէսը անցած էր եւ ինձմէ առաջ ալ երկու կին յաճախորդներ կարգի կը սպասէին: Անոնցմէ առաջ, ուրիշ կին մը կար, որուն ապսպրանքները արդէն պատրաստուելու վրայ էին: Առաջին կինը, որու համար ըսի թէ ապսպրանքները կը պատրաստուէին, երբ գործը լրացաւ՝ ծրարները առաւ, հաշիւը վճարեց ու գնաց:

Հիմա, կարգը միւս երկու կիններուն եկած էր:

Չէի գիտեր թէ անոնցմէ որո՞ւնն էր կարգը: Մէկը, որ գունաւոր *մանթօ* մը հագած էր, անոր տակէն հագած աւելի հալումաշ շրջագգեստը ծածկելու համար, կը պատրաստուէր իր ապսպրանքը տալու: Ասկէ կը հետեւցնէի, թէ կարգը անորն էր: Իսկ միւսը, որ քառասուն քառասունըհինգ տարու կ'երեւէր եւ մեծ խնամքով շպարուած էր, մետաքսեայ շքեղ շրջագգեստ մը կը կրէր եւ թեւերն ու մատները բեռնաւորուած էին արժէքաւոր ապարանջաններով ու մատանիներով: Ասիկա ալ անհամբերութեան նշաններ ցոյց կու տար ու ջղային շարժումներով կ'երթար կու գար շարունակ խանութին երկայնքին: Ան ալ իր կարգին կը պատրաստուէր իր ապսպրանքները տալու:

— Ինձի երկուհարիւրյիսուն կրամ կովու միս, քսանըհինգ դրուշի ալ ոսկորի կտորուանք, ըսաւ վերջապէս գունաւոր *մանթոյ*ով կինը՝ դէպի մսավաճառին աշկերտը մօտենալով: Բաւական սպասեցի, պզտիկս տունը մինակ է:

— Նիքօ՛, նայէ Ֆաթմա Հանըմը ի՞նչ կ'ուզէ, ըսաւ այդ միջոցին մսավաճառը՝ աշկերտին ձայնելով: Յետոյ, մետաքսեայ շրջագգեստաւոր եւ խնամքով շպարուած կնոջ դառնալով հարցուց. հրամմեցէ՛ք, Ֆաթմա Հանըմ, ի՞նչ կ'ուզէիք:

— Ասանկ՝ տասը տասներկու կտորի չափ կողիկ, պատասխանեց Ֆաթմա Հանըմ ապարանջանները շիրտացնելով: Քանի մը հատ երիկամ, կէս քիօ, եօթըհարիւրյիսուն կրամի չափ ալ իւղոտ կողմէն՝ քաշուած միս:

— Իմ գործս տեսնէիք, միջամտեց առաջին կինը ցած ու տկար ձայնով մը: Նախ իմ գործս տեսնէիք *մասթօրի*, եթէ կարելի էր: Պզտիկս տունը առանձին է. կրակ ալ դրած եմ որ մինչեւ միսը տանիլս՝ բռնէ: Ամուսինս պառկած է. տակաւին այս ժամէն վերջ ոսկոր պիտի խաշեմ ու հիւանդի ապուր պատրաստեմ: Արդէն բաւական սպասեցի:

— Նիքօ՛, ըսաւ այս անգամ վարպետը աշկերտին դառնալով: Դուն Ֆաթմա Հանըմին նայէ, ըսի: Եւ կամ, դուն անոր միսը եւ ոսկորները տուր, ես կը նայիմ: Հրամեցէ՛ք Ֆաթմա Հանըմ:

— Տասը տասներկու կտոր կողիկ, ըսաւ Ֆաթմա Հանըմը քիչ մը ջղայնացած այս երկրորդ անգամ ապսպրելու ձանձրոյթէն: Քանի՞ անգամ պիտի ըսենք: Տասը տասներկու կտոր կողիկ, քանի մը հատ երիկամ, կէս քիօ, եօթըհարիւրյիսուն կրամի չափ ալ իւղոտ կողմէն՝ քաշուած միս:

— Կողիկը եւ երիկամները կարելի է տալ, սակայն քաշուած միսը՝ դժբախտաբար, Ֆաթմա Հանըմ: Նիքօ՛, տակաւին չլմնցա՞ւ գործդ, այդքան բանով կ'արժէ՞ ասանկ գործի ժամանակ այդքան զբաղիլ: Տո՛ւր թող երթայ: Միշտ ալ այսպէս գործի ատեն կու գայ: Քիչ մը կանուխ եթէ գան՝ չէր ըլլար կարծես: Նայէ՛, Ֆաթմա Հանըմը ի՛նչ կ'ուզէ: Տասը տասներկու կտոր կողիկ պատրաստէ: Ես ալ, լաւ երիկամներէն զատեմ քանի մը հատ: Շատ սպասեց Ֆաթմա Հանըմը: Ժամն ալ տասներկուքը եկաւ: Տակաւին պարոնն ալ կայ:

— Ոսկորը չտուիր, ըսաւ առաջին կինը քիչ մըն ալ վախնալով կարծես չախ լսելէ: Քսանըհինգ դրուշի ալ ոսկորի կտորուանք ուզեր էի:

— Միշտ ալ գործի ժամանակ կու գաք, ըսաւ վարպետը դարձեալ բարկանալով: Միշտ ալ գործի ժամանակ կու գաք: Քիչ մը կանուխ եթէ գալու ըլլաք, չէր ըլլար կարծես:

Յետոյ, ծռեցաւ, սեղանին տակէն քանի մը կտոր ոսկոր հանեց, պատէն կեռէ մը կախուած թուղթերէն թերթ մը փրցուց, բթամատը թքոտելով՝ ոսկորները վրան դրաւ, քէնց Նիքոյին առջեւը ու ըսաւ.

— Սաւոնք ալ փաթթէ ու ելլէ, երթայ:

Ասկէ վերջ, Ֆաթմա Հանըմին դառնալով, ըսաւ.

— Կողմնակն ու երիկամները տանք Ֆաթմա Հանրմ: Սակայն քաշուած միսը անկարելի է: Որովհետեւ, ինչպէս կը տեսնէք, մեքենան քակած ենք:

— Ա՛խ, ըսաւ Ֆաթմա Հանրմ չփացած տողոց պէս տարօրինակ ձայնով մը եւ վիզը ծռելով: Մինչդեռ, դուն գիտես թէ ես ամէն օր միս քաշել կու տամ:

— Սակայն, հիմա մեքենան քակեցինք այլեւս, ըսաւ վարպետը դարձեալ: Կը տեսնէք թէ քակուած է մեքենան: Գիտէք, օդերը տաք են, միսը քաշուած ատեն ալ կը տաքնայ քիչ մը, եթէ ամէն օր չքակենք ու չմաքրենք մեքենան, դանակներուն բերանը մնացած միսը կը հոտի: Նոյնիսկ ամառը, երբ օդերը աւելի տաքնան, օրը երկու անգամ կը քակենք մեքենան: Անպայման կը հոտի մինչեւ առաւօտ: Իսկ հիմա, քանի որ այսօր կիրակի է, կէսօրին պէտք է գոցել խանութը: Եթէ չմաքրենք, մինչեւ վաղը առտու չի՞ հոտի դանակներուն վրայ ու մեքենային մէջ փակչած միսը:

— Ի՞նչ ընեմ, ըսաւ Ֆաթմա Հանրմ դարձեալ շփացած տողոց պէս: Ես քաշուած միս կ'ուզեմ:

— Դո՛ւք ըսէք, ըսաւ վարպետը այս անգամ աղաչական շեշտով մը: Դո՛ւք ըսէք, Ֆաթմա Հանրմ: Ի՞նչ կրնամ ընել: Դո՛ւք ըսէք եւ ես ընեմ:

— Չեմ գիտեր, ես քաշուած մի կ'ուզեմ, թզկաց դարձեալ Ֆաթմա Հանրմ:

— Պզտիկ պզտիկ կը մանրենք, ըսաւ վարպետը: Շատ պզտիկ պզտիկ կը մանրենք. ճիշդ մեքենայէ քաշուածի պէս կ'ըլլայ: Ի՞նչ կ'ըսէք: Ես հիմա Նիքոյին մանրել կու տամ:

— Ես մեքենայէն քաշուած կ'ուզե՛մ: Դանակով մանրուածը ես ի՞նչ ընեմ: Մինչդեռ դուն գիտես թէ՛ ես ամէն օր մեքենայէն քաշուած միս կը գնեմ:

— Այո՛, սակայն մեքենան քակեցինք այլեւս Ֆաթմա Հանրմ, ըսաւ դարձեալ վարպետը մեծ համբերութեամբ: Մեքենան քակեցինք անգամ մը. ձեռքէս ի՞նչ կու գայ:

— Ես մեքենայէ քաշուած միս կ'ուզեմ, կրկնեց Ֆաթմա Հանրմ անգամ մըն ալ ու աւելցուց. քանի որ քաշուած միս չկայ, ես ալ կ'երթամ, ուրիշ տեղէ կ'առնեմ: Թող կողմնակն ալ մնայ, երիկամներն ալ: Կ'երթամ, բոլորն ալ ուրիշ տեղէ կ'առնեմ:

— Հիմա ամէն տեղ մեքենաները քակած կ'ըննալ, ձայնեց վարպետը Ֆաթմա Հանրմին ետեւէն, որ ջղայնացած, կօշիկներուն կրունկները ուժգին գետին զարնելով, դուրս կ'ելլէր խանութէն:

— Թող ըլլայ, ըսաւ Ֆաթմա Հանըմ դրան առջեւէն առանց ետին իսկ դառնալու: Թող ըլլայ: Կողիկն ու երիկամներն ալ չեմ ուզեր եւ անգամ մըն ալ ձեր խանութը ոտք չեմ կոխեր:

Երբ Ֆաթմա Հանըմ կօշիկներուն կրունկները ուժգին գետին զարնելով եւ ջղայնացած հեռացաւ մսավաճառին խանութէն ու դիմացի մայրը անցաւ, վարպետը ըսաւ անոր ետեւէն.

— Մինչեւ դժոխք ճամբայ ունիս:

Ասիկա Ֆաթմա Հանըմը չիմացաւ բնականաբար: Արդէն անոր իմացնելու համար ալ չէր ըսուած: Հիմա կարգը իմս էր: Նիքոյին դառնալով ըսաւ.

— Նիքօ, պարոնը մի՛ սպասեցներ: Նայէ ի՞նչ կ'ուզէ: Հրամմեցէք պարոն:

Յետոյ, երբ ես ապսպրանքս կու տայի Նիքոյին, վարպետը կը խօսէր տակաւին:

— Մինչեւ դժոխք ճամբայ ունիս, անպատիւ կին: Ժամերով սլքտկալուդ՝ թող ժամ առաջ գայիր, գնելիքներդ գնէիր:

Անկէ վերջ, ինձի դառնալով շարունակեց.

— Անպատիւ է: Կաւատ է: Ամէն մարդ գիտէ ասիկա: Կաւատներուն ալ մեծն է: Քանի անգամ փակուեցաւ տունը: Քանի՛ քանի տեղեր ժամադրատուն կը բանեցնէ: Ամէն մարդ գիտէ ասիկա: Հիմա, դո՛ւք ըսէք, խնդրե՛մ, իրաւունք չունի՞մ: Առտուրնէ ի վեր քսան անգամ անցաւ խանութին առջեւէն: Փողոցները ասոր անոր հետ շաղակրատելուն, չէ՞ր ըլլար որ գար եւ գնելիքը գներ: Գործը ի՞նչ է ամբողջ օրը: Կաւատին գործը ի՞նչ կ'ըլլայ: Հիմա այս մեքենան կազմել կայ, լեցնել կայ, դարձեալ քակել կայ, մաքրել կայ: Ասկէ զատ, ձգենք կազմելն ու քակելը, առնուազն՝ երեք չորս հարիւր կրամ միս կ'ուտէ այս մեքենան: Դանակներուն վրայ պիտի փակչի, մեքենային բոլորտիքը պիտի փակչի: Միսը չքաշած պիտի ուտէ երեք հարիւր, երեքհարիւրյիսուն կրամ մը, քաշելէն վերջն ալ այդքան առ քեզի մէկուկէս երկու ոսկիի վնաս: Ո՞վ պիտի տայ մեր այս վնասը մեզի: Եթէ չմաքրենք, կը հոտի այդ փակչած միսը: Հիմա դուն, անպատի՛ւ կին, փոխանակ փողոցները սլքտկալու, եթէ ժամ առաջ գայիր եւ առնելիքդ առնէիր ու անկէ վերջ ասոր անոր հետ ճամբաները շաղակրատէիր, չէ՞ր ըլլար: Ըսէք, դո՛ւք ըսէք, չէ՞ր ըլլար:

Անշո՛ւշտ թէ կ'ըլլար, բայց ինքը —վարպետը— ինչո՞ւ այդքան համբերատար եղեր էր գործի ժամանակ, երբ ուրիշ յաճախորդ մը կարգի կը սպասէր:

Դէպի Լոյս  
02.06.1951

